




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9888

2

№ 2.

ՇԱՎԱՍՊ

№ 2.

ԿՈՐԾԱՆՎՈՂ ՅԵԿԵՂԵՑԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ
ՊԱՐԹԻԱԿԱՆ
ԿՈՆԳՐԵՍՍԻ
ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՅԱՆԻ ԱԶԵՏ ՅԵԿ. ՅԵԿԱԿՅԱՆԻԹԵՆ

ԹԻՒՐԿԻԱ - 1926

286

Շ-34

№ 42

286

6-34

ՇԱՀԱՍՄ

№ 2.

Ca $\frac{U}{2188}$

4 NOV 2000

ԿՈՐԺԱՆՎՈՂ ՅԵԿԵՂԵՑԻ

ИНСТИТУТ
ДОСТОИНСТВ
Академия
СССР



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԾԱՆԳԱՐԱՆԻ ԱԶԳԱՆ ԳԵՂԵՑԻ ԳԵՂԵՑԻ

ԹԻՖԼԻՍ — 1926

13 JUL 2013

9888

ՊՈԼԻԳՐԱՖԻԿԱԿԱՆ
Վ. ԲՈՂՈՎԱԶԵՅԻ ԿՈՒՆ.
Ա.Կ. ՄԵՐԵՔԵՂԻ, № 3.
Դրամ. 1761. Տիր. 2000

ԹԵԳԼԻՍ



59096-66

ԿՈՐԾԱՆՎՈՂ ՅԵԿԵՂԵՑԻ

Ա.

Բոլոր հին հեթանոսական կրոնների պատմությունը
ցույց է տալիս, վոր կրոններն ընկնում, կործանվում
են քրմական-հոգևոր դասերի ձեռքով:

Յերբ քրմական դասը դադարում է կրոնի հիմնա-
դրի գաղափարներին հավատալուց, աղավաղում է այդ
հիմնական մաքուր գաղափարները և նրանց տեղը դնում
է կրոնի վոգուն հակառակ սրտաքին ծեսեր, արարո-
ղություններ, վոր փողով է ծախում հավատացյալ ժո-
ղովրդի վրա և այդ կուտակված փողերով անձնատուր
է լինում գեղիս, անառակ, անասնական կյանքի, վերջ
ի վերջ ժողովրդի մեջ կասկած է հարուցանում դեպի
հավատի ճշմարտությունները: Ժողովրդի մեջ հարուց-
ված այդ կասկածը հետզհետե դառնում է կրոնական
անտարբերություն, հետո դառնում է անհավատու-
թյուն: Իսկ յերբ ժողովրդի մեջ անհավատություն
է բուն դնում, մեհյանները դատարկվում են աղոթո-
ղներից և իրենց իրենց փակվում:

Այդ մոմենտում առաջ է գալիս հետևյալ դրություն-
ներ. կամ՝ ժողովուրդը պահանջ է զգում մի նոր, ավե-

լի բարձր, մաքուր կրոնի և մաքրակենցաղ հոգևորականութեան և ստեղծում է նոր կրոն, և կամ իր կրոնը, իր մեհյանը լքելով՝ գնում է միանում ուրիշ կրոնի հավատացյալներին, գնում է ուրիշ դավանութիւններին մեհյաններում աղոթելու, նկատելով, վոր այդտեղ քրմերն ավելի գաղափարական գործ են անում, հավատում են իրենց քարոզածին և մաքուր վարք ու բարք են ցուցադրում:

Այս ճշմարտութեանը՝ իբրև հաստատութիւն, որինակ կարող ենք բերել Բուդդայի կրոնը:

Բուդդայի կրոնը հեթանոսական ամենամեծ կրոններից մեկն է. նա քարոզում էր ինքնազստութիւն, մաքուր բարք ու վարք և հոգեկան խաղաղութիւն: Այսինքն՝ յերբ մարդ իր կրօնը զստում է, ուրիշին չի զրկում, չի փնտում, սակավապետ է, միայն իր հալալ աշխատանքովն է ապրում և շարունակ ինքն իր մաքրելի մեջն ամփոփելով՝ անձնատուր է լինում իր հոգին մաքրելու աշխատանքին և Աստուհեան է խոսում իր սրտում, նրան տիրում է մի հոգեկան խաղաղութիւն, մի կատարյալ յերանութիւն, վոր անձանով է չար, յեսական հոգիներին:

Իր գաղափարների և հավատի մաքրութեան շրջանում բուդդայական այդ կրոնը սատիկ աբազութեամբ տարածվեց Հնդկաստանում և համաշխարհային կրոն կարող էր դառնալ, յեթե բուդդայական հոգևոր դասը չաղավաղեր այդ կրոնի մաքրութիւնը:

Հնդկաստանում բուդդայական կրոնի անունով շինվեցին 2000-ի չափ հոյակապ վանքեր, նրանց մեջ լըցվեցին հարյուր հազարավոր կրոնավորներ — լամաներ. ստեղծեցին բարդ-բարդ ծեսեր ու արարողութիւններ՝

պարեր, աղոթքի ջրադացներ, «տեր վողորմյաներ» (թաղբհ) և այլն, վորոնց համար ժողովուրդը պարտավորվում էր տալ իր աշխատանքի անագին տոկոսը վանքերին: Կուտակված վանական հարստութիւնները առաջ բերին վանքերում՝ այդ ամուրի համարվող վանականների մեջ անառակութիւն, հակաբնական ախտեր, կեր ու խում, գվարճութիւններ, խաբեբայութիւն, վոճրագործութիւն:

Վանական բարքերն սպանեցին ժողովրդի հավատը, յերբ նա ուշքի յեկավ: Յեվ այդ որվանից Բուդդայի կրոնի տարածումը դադարեց, հավատացյալները գանաղան հոսանքներով գնացին միացան ուրիշ կրոններին, իսկ բուդդայականը բաժանվեց զանազան աղանդների, վորոնք իրար դեմ թշնամացան և կռիվ մղեցին, կյանքից դուրս քշելով այն հոգեկան խաղաղութիւնը, վոր Բուդդայի կրոնի հիմքն էր կազմում:

Յերկրորդ որինակը կարող է լինել հրեյական կրոնը:

Քրիստոսից 300—400 տարի առաջ հրեյական հոգեվոր գասերը իրենց քահանայապետներով, քահանաներով, դևտացիներով միասին մոռացութեան տվին մովսիսական կրոնի պարզութիւնն ու բարոյական գաղափարները. նրանց փոխարեն, վորոնց էլ չէին հավատում, ստեղծեցին չափազանց շատ ծեսեր, արարողութիւններ, զոհարեութիւններ, վորոնք ծախվում էին հավատացյալների վրա շատ թանգ գնով. ժողովուրդը ծանր տուրքերի տակը դրվեց հավատի և հայրենիքի անուշով, Յերուսաղեմի տաճարի հսկայական պահեստները վոսկով ու արծաթով լցվեցին և հոգևոր դասը փոխառու բանկ դարձավ վաճառականների և պետութիւնների համար: Հոգևոր դասը անաշխատ անբավ է

հարստութեան տեր դառնալով՝ իրեն տվեց զեղիս կյանքի, զվարճութիւնների, կատարյալ ապականութեան և չար գործերի:

Նրա խոսքը դարձավ կեղծ, փարիսեցիութիւն, վորովհետեւ խոսքերին գործը չեր համապատասխանում: Տիրող հոռմեյական կայսերական իշխանութիւնը մեկ կողմից, նրանց զերիշխանութեան տակ գտնվող հրեյական թագավորները մյուս կողմից, ընչաքաղց և վատավարք հոգևոր դասը մի յերրորդ կողմից ծանր հարկերով ու տուրքերով բեռնեցին հրեյա ժողովրդին և նրան տիրեց քաղցը, մերկութիւնը, դառն աղքատութիւնը, ֆիզիքական ու հոգեկան հիվանդութիւնները:

Մի շարք հեռատես, ժողովրդասեր, գորեղ հավատի տեր մարդիկ, վորոնք կոչվեցին մարգարեներ, տեր կանգնեցին ճշմարիտ հավատին, պայքար սկսեցին ապականված հոգևոր անհավատ դասի դեմ, փարիսեցիութեան դեմ. տեր կանգնեցին կողոպտվող ժողովրդին և նրանց աչքերը բացին, վոր տեսնի իր խեղճութիւնը վատավարք հոգևորների ձեռքից և իր հավատի մաքրութեան դառնա ու իր փրկութեան վրա մտածի:

Յեսայի մարգարեն իր բողոքի շանթերն և թափում անարժան հոգևորների գլխին ասելով նրանց. «Ձեր բուրած խուկը պիղծ և Աստծու առաջ, ձեր աղոթքն՝ անյսելի, ձեր զոհերն՝ անընդունելի, վորովհետեւ ձեր գործերը չար են Աստծու առաջ»:

Յեզեկիել մարգարեն հրեյա տանջված ժողովրդին նմանեցնում է վոչ թե կենդանի մարդկանց, այլ ցամքած վոսկորների, վորի վրա վոչ ջիւղ և մնացել, վոչ միս, վոչ հոգի վատավարք հոգևոր դասի յերեսից և քարոզում է, վոր վոսկորները շարժվին, կենդանանան,

վեր կենան, մաքրեն իրենց հավատն ու տաճարը ապականիչ ազվեսներից, վոր Աստծու այգին են ապականում:

Այսպիսի մի շարք մարգարեների ձայնը հրեյա բռնավոր ու չար հոգևորականութիւնը նրանց կոկորդի մեջը խեղդեց. նրանցից շատ շատերին հալածեց ու սպանեց:

Սակայն տգիտութեան մեջ թաղված ու խաբված ժողովուրդը միշտ վոսկրացած չի մնա: Նա զգվեց իր հոգևորներների կեղծ հավատից, ախտավոր բարք ու վարքից և չար գործերից: Հեաւանքն այն յեղավ, վոր ժողովրդի մի մասը բոլորովին հեռացավ տաճարականների հավատից, քաշվեց գյուղերն ու ստեղծեց համայնակեցական կյանք հավասարութեան, յեղբայրութեան հողի վրա: Սրանք հիմք դրին այն աղանդին, վոր կոչվում է Հեսյան աղանդ:

Մի մասն ել յերես դարձնելով հոգևորների կեղծ քարոզներից, վորոնց չեր համապատասխանում նրանց զեղիս կյանքն ու չար գործերը, յերես դարձրեց նրանցից և ահագին խմբերով թե ցամաքի և թե ծովերի վրա ավազակ դարձավ: Մի ուրիշ մաս՝ Հրեաստանից դուրս գտնվող հրեյա գաղութները ընկած հոգևոր դասի մեջ, վոչ հավատ, վոչ բարոյական մաքրութիւն տեսնելով՝ թողին իրենց պապեական կրոնն ու ձուլվեցին հունական, հռոմեյական զանազան կրոնների ու աղանդների մեջ: Ժողովրդի մի մասն ել պաղելով իր տաճարից հոգևորների յերեսից, կարոտեց յեկեղեցու բարեփոխութեան, ականջը մարգարեների ձենին պահելով, վորոնք Մեսսիայի մոտավոր գալուստն եյին գուշակել, աչքերը ուղղել եր դեպի ապագան և կարո-

տով սպասում եր տեմնել աշխարհի Փրկչին, վոր պետք է դար ճշմարիտ հավատը սովորեցնելու, ընկած տաճարը վերականգնելու և մարդկանց հոգուն ու մարմինն հանգիստ տալու:

Ահա այս ճանապարհով, ընկած, ընչաքաղց, ծուլ, անհավատ, կողոպտիչ, անգութ հոգևորականության յերեսից սկսեց լուծվել, քայքայվել հրեյական կրոնը, վորը իր մաքուր վիճակի մեջ կարող եր համաշխարհային կրոն դառնալ:

Բ.

Յեկավ տանջված, հոգով ու մարմնով հոշոտված մարդկության բարերար Փրկիչը: Նրա հրաշալի «Լեւրան քարոզը» կառուցումն է ճշմարիտ հավատի և ճշմարիտ բարոյականության:

Այդ քարոզն ամբողջովին ուղղված է փարիսեցիական կեղծ բարեպաշտության, տաճարական անգթության, հոգևորների ստության, շահամոլության, անիրավության, պղծության, փառասիրության, բռնության դեմ:

Նա խարազանավ ծեծելով դուրս քշեց տաճարից շահամոլներին՝ ասելով. «Իմ տունը աղոթքի տուն պետք է կոչվի, բայց դուք նրան ավազակների վորջ եք դարձրել»: Մի ուրիշ քարոզով նա իր սքանչելի «վայ»-երը կարդաց փարիսեցի հոգևորների գլխին, անվանելով նրանց՝ մձողակ քամող, ուղտ կլանող, վորբերի և այլինների տներն ուտող, անիրավ դատավոր, ժողովրդի մեջքին ծանր բեռներ դնող, դրսից մաքուր՝ ներսից կեղտոտ, փառասեր, խաբեբա, ոճի ձագեր և սպառնաց

նրանց թե՛ ձեր տաճարը քանդելու տաճար է և յես կը քանդեմ այդ տաճարն այնպես, վոր քար չմնա քարի վրա, յիթե դուք չեք ուղղվի:

Յեւ նա իր այս սքանչելի պայքարից հետո տվեց ճշմարիտ հավատի հիմունքները՝ Աստծու արքայության գաղափարը ճշմարտության, արդարության, սիրտ, բարության, բոլոր մարդկանց մի յերկնավոր հոր վորդիք լինելու մասին:

Քարոզում եր նա ծովի ափին, քարոզում եր նավակների միջից, քարոզում եր լեռների լանջից, քարոզում եր հրապարակներում, քարոզում եր մասնավոր տներում և Նրա շուրջը միշտ ծովացած եր կենդանի խոսքի կարոտ ժողովուրդը: Նրա շուրջը խմբված եյին լինում նաև տաճարական փարիսեցիները, վորպես զի փորձող սատանաների նման Նրան փորձին, զրպարտելու մի բան գտնեն և սպանեն Նրան, Նրա դեմ գրգռելով կույր, յերերուն ամբոխին և Հոռի կայսերական կուսակալին:

Նենգավոր լեզուները հասան իրենց նպատակին, տաճարական քահանայապետները սուտ վկաներ ճարեցին, զրպարտություններ փաթաթեցին Նրա վզին թե Աստծուն հայհոյեց, ինքն իրեն Աստծու վորդի յե կոչում, անվանեցին Նրան դիվահար, փուչ մարդկանց հետ ուտող խմող, մաքսավորների և մեղավորների բարեկամ, կայսեր հակառակ. պիղծ բերանների թքով ոճեցին Նրա յերեսը, փշով պսակեցին Նրա ձակատը, ապտակեցին ու տարան կանգնեցրին Պիղատոսի առաջ թե մեր որհնքով պիտի խաչվի Սա:

Յեվ նրանց ձայնակցում եր կույր, դանազան հողմերով յերերուն ամբոխը, վոր գոռում եր. «Բարձ ի մենջ, բարձ ի մենջ, ի խաչ հան զդա, ի խաչ, ի խաչ»

և դրա փոխարեն մեզ համար բանդից ազատիր ավագակ Բարաբրային: Յեվ այս այն ամբողջն եք, վոր մի որ առաջ ովսանաներով ընդունեց նրա մուտքը Յերուսաղեմ, վոր իր հանդերձներն եր հանում ու փռում նրա հեծած ավանակի վոտքերի շտակ, վոր ծաղիկներ, ճյուղ ու տերև եր փռում նրա ճանապարհին:

Նրան դողգոթա վարելիս ծանր խաչի բեռան տակ, կանայք լալիս ելին նրա վրա, կոծում ելին անմեղ Նահատակին:

Նրանց սուգը ազդեց Խաչակրի վրա ու Նա դարձավ դեպի քնքշասիրտ կանայք ու ասաց. «Յերուսաղեմի աղջիկներ, ինձ վրա մի լաք, լացեք ձեզ վրա և ձեր վորդիների վրա, վորովհետև այնպիսի որեր են դալու, վոր յերանի եք տալու ամուլներին, վոր վորդիք չեն ծնել ու չեն սնուցել: Այդ ժամանակ պիտի ասեք թե՛ լեռներ, մեզ վրա ընկեք, բլուրներ, ծածկեցեք մեզ: Թե՛ վոր այսպես են վարվում դալար ծառի հետ, չորերի հետ ինչպես պետք է վարվին»:

Իր մոտալուտ մահը գիտենալով՝ Հիսուսը կայծակնացալ շրթունքներով դադեց վատաբարո քահանայապետներին ասելով՝ Թե Մովսիսի աթոռի վրա նստել են դպիրներն ու փարիսեցիները, վորոնք ինչ վոր խոսում են, այն չեն անում. նրանց գլխին թափեց իր արդար դայրույթը «վայերի» քարե կարկուտով և անհուն սերն ու վիշտը արտահայտելով դեպի հոգևորականների յերեսից կործանվող Յերուսաղեմը, իր տխուր, սրտաճմլիկ մարգարեյությունը կարգաց. «Յերուսաղեմ, Յերուսաղեմ, վոր կոտորում ելիր մարգարեներին և քարկոծում քեզ մոտ ուղարկված առաքյալներին, քանի անգամ կամեցա հավաքել քո ցաք ու ցրիվ մա-

նուկներին այնպես, ինչպես մայր հաջի ե հավաքում իր ձագերին իր թևերի տակը, բայց դուք չկամեցաք. արդ, թող ձեր տունը ձեր գլխին ավերակ դառնա»:

Յեվ կատարվեցավ այս տխուր, արցունքով, սիրով ու վշտով ցողված մարգարեյությունը. անարժան քահանայապետների յերեսից կործանվեց Յերուսաղեմը. Տիտոսի սուրը, Վեսպասյանի հուրը հիմնահատակ կործանեցին Յերուսաղեմը, կործանեցին Սողոմոնի փառահեղ տաճարը, վորի մի բեկորի առաջ այսօր՝ տարին մի անգամ, հրեյա կանայք սուգ են անում, հառաչանքով, արցունքով ու համբույրներով ծածկելով ավերակի բեկորը, վորը՝ վորպես նախատիք վատաբարո հոգևոր դասի հիշատակին, ցցված մնացել է մինչև այսօր:

Գ.

Դառնանք Հայոց յեկեղեցուն.

Մեր Հիսուսին վորպես «ավագակի» խաչել տալով, հրեյա քահանայապետները ճշմարտությունը ընդմիջտ թաղել չկարողացան յերկրի սրտում: Քրիստոսը հարություն առավ, նրա հարությունը վեհ գաղափարների կնիքը խորտակեց, նրանք Սուրբ Հոգու հրեղեն թեփելով դուրս թոան, թառեցին առաքյալների հոգու մեջ, տիրեցին նրանց եյությանը և նրանք արհամարհելով հալածանքը, մահը, նահատակության այն ճամբեն բռնեցին, վոր սկիզբն առավ Դողգոթայի միջին խաչի պատմանդանից և՛ տանջված մարգարեյության սիրովը լցված, աշխարհն աշխարհ ընկան Քրիստոս քարոզելու, Քրիստոսով ապրելու, Քրիստոսով գործելու: Ամեն տեղ կազմվեցին քրիստոնեյական համայնքներ,

քրիստոնեական ազատ յեղբայրություններ, ազատ մարդկային փծուն կրքերից, ազատ բռնավոր կայսր-ներ յերկրորդից, ազատ հրեական բռնավոր քահանա-յապետների գալազանից: Յեւ նրանց մեջ բարոյական վոսկեղեն կապը Քրիստոսի անձնավորությունն էր:

Առաքյալներից յերեքը Հայաստան մտան և հիմք դրին հայ քրիստոնյա յեղբայրություններին, մինչև վոր Մեծ Լուսավորիչը նրանց խմբից մի ազատ յեկեղեցու մեջ, վոր կոչվեց Հայոց առաքելական Լուսավոր-չական ազատ յեկեղեցի:

Այդ յեկեղեցուն հայ ազգը շատ բան և պարտական. պարտական է իր լույս հավատով դեպի ճշմարտու-թյուն, բարություն, գեղեցկություն, յեղբայրություն, սեր. պարտական է իր գրով ու գրականությամբ, իր պատմությամբ, իր գեղարվեստով և իր Քրիստոնեյա-կան ըմբռնումներով ու ապրումներով:

Սակայն վսեմ գաղափարները անարժան ձեռքերում միշտ աղավաղվում են, ինչպես կռակի ձեռքերում շու-տով թորշոմում, սե լաթ են դառնում քնքույշ վարդերը. անմաքուր հոգիներում կեղտոտվում են նրանք, ինչպես շողարձակ գոհարները կեղտոտ, ցե-խաթաթախ անոթի մեջ: Հետգհետե քրիստոնեական վսեմ գաղափարների անոթները՝ հայ հոգևորականու-թյունը, ընկավ իր բարձրությունից, ապականվեց տգիտության ցեխով, անարժաթ Քրիստոսին մոռա-նալով, նրա անունով կալվածների յետևից ընկավ, բազմաբարդ ոտարամուտ ծեսերով ու արարողություն-ներով փարիսեցիաբար կեղեքեց հավատացյալներին, անձնատուր յեղավ շռայլության, շվայտության, մարմ-նական վայելքների և Հիսուսի սլայծառ դեմքը դալկա-

ցավ հայոց յեկեղեցու մեջ: Հայոց հոգևորականությու-նը իր ձեռքից խաչը դեն ձգեց ու իշխանական գավա-զանն առավ, սիրո տեղը պաաժական դաժան որկնք-ներ սահմանեց հավատացյալների համար. նա մոռա-ցավ թե առաքյալ է, և մտքումը պինդ պահեց թե՛ իշխան է, աշխարհիկ իշխանի նման: Քաջալերեց կռիվ-ներ, աջակցեց անմիտ, հակաքրիստոսական պատե-րազմներին, բորբոքեց ատելությունը ազգերի մեջ և նրանց ատելության ծանր տապանաքարը քաշեց հայ ժողովրդի վրա. ավետարանական սիրո քաղաքականու-նը մոռանալով, արտաքին քաղաքականությամբ զբաղ-վեց խաղալիք դառնալով ոտար թագավորների և թե-թեամիտ կուսակցությունների ձեռքին և արատավորեց իր պատիվը, կորցրեց իր հեղինակությունը և բարո-յական մահվան սև քողը քաշեց իր յերեսին:

Յեւ այս ամենը հայ հոգևորականության յերեսից:

Հայոց յեկեղեցին իր կրոնա-բարոյական անկման վերջին փուլը մտավ ոռւա կայսրների տիրապետության որերից: Ճարական իշխանության և հայոց յեկեղեցու հարաբերությունը իբր թե կանոնավորելու համար, հայտնի ПОЛОЖЕНИЯ-ով կուրացրին հայ հոգևորականու-թյան և շղթայի զարկեցին հայոց յեկեղեցու ազատու-թյունը «կայսերական հովանու» տակ: Հայոց յեկեղե-ցու վզին փաթաթեցին նրա հոգուն հակառակ ոռւա-կան սինոդ, կոնսիսատորիա, հոգևոր կառավարություն ու նրանց մեջը դրին հոգևորներին, շրջապատելով նրանց հսկայական կալվածներով, առատ ոռճիկներով, վոր Քրիստոսի անունով ցարերին ծառայեն, վորպես հոգևոր չինովնիկներ: Առատ յեկամուտներ, առատ ոռճիկներ, անպատասխանատու կաշառառության մի-

Ղոցով դեզված հարստութեան մեջ մեղկացավ հոգևորականութունը, անաշխատ փափկակեցութեան հաճոյքով բռնված բարդ բարդ տգետներ, քրիստոնեայութեան վողուն անձանոթ փարիսեցիներ հոգևոր կոչումն ստացան, յեպիսկոպոսներ դարձան, սարի չորանները ուսերից քեչեն վերցրին ու նրա տեղը քահանայական փիլոնը ծածկեցին ու կապեցին նրանց հայ ժողովրդի վրին: Հայ ժողովրդի մեջ լոյս ավետարանական կենդանի խոսքը և մեռավ քրիստոնեական կենդանի գործը, թոռմեցավ տգիտութեան խորշակով մեր վարք ու բարքի ծաղիկը:

Յեկեղեցու կառավարութեան միջից ժողովրդի մասնակցութիւնը դուրս ձգվեցավ և մնաց աշտեղ միայն ցարական հրաման յեպիսկոպոսի գլխաւս:

Անմիտները մոռացան Ավետարանի մեծատան առակը ու փափկակեցութեան գրկում թափալելիս՝ իրենց անձերին ասում եյին. «տես, անձն իմ, ինչքան բարիք ունիմ, կեր, խմիր, քեֆ արա». կուրորեն չեյին տեսնում թե մի որ՝ յերբ իրենց վրա մութ գիշերը հասնի, հրեշտակը պիտի կանգնի մերկ սրով նրանց սնարի քով ու ձեն տա «հոգիդ առնելու եմ այս գիշեր»:

Այդ գիշերը նախատեսեցին հայ ժողովրդի ընտիր գլխակները և յեկեղեցու բարեփոխութեան, բարեկարգութեան խնդիրը դրին 60-ական թվականներից, խեղդված ձայնով: Հոգևոր դասը խուլ մնաց աշտ ձայների առաջ և՛ միաժամանակ ցարական սրին ու ավինին հենված, չարաչար հալածեց այդ աղնիվ հայերին, մաշեց նրանց քաղցով, բանդերով, անվանարկութեամբ և վաղաժամ գերեզման քշեց:

Հայ անարգ յեպիսկոպոսները, վորոնք սինոդի պրուկուրորների ձեռքին խաղալիք դարձան, թույնով մոտեցան աշտ ընտիր կաթուղիկոսներին, վորոնք իրենց ժողովրդի ձայնը լսելու ականջ ունեյին, նրա իրավունքները ընդարձակելու բարի տրամադրութիւն: Հայ յեպիսկոպոսների ձեռքով թունավորվեցին Ներսես Յե., Մատթևոս Ա. (կարդացեք «Ծիլն Ավարայրի») և Մակար կաթուղիկոսը:

Հայ հոգևորականութեան անփույթ վերաբերմունքի, վատթար վարքերի, անմիտ հալածանքների հետևանքով հայ ժողովրդի մի մասը հատված առ հատված բողոքական, կաթողիկ, շաքաթական, պրիզուն դարձավ (կարդացեք «Հյուսիսափայլ», Յերեցյանի «Թոնդրակեցոց աղանդը»):

Հայոց յեկեղեցու վրա նոր որբեր յեկան.

Ռուսական Մեծ հեղափոխութիւնը յեկավ՝ ինչպես մի մրբիկ, սրբեց ու տարավ ցարն ու չարը, քանդեց տանջված ժողովուրդների ստրկութեան շղթաները, ցրվեց դասակարգային մոլորութիւնները, և ամեն տեսակ կրոնների ազատութիւն հայտարարեց, կրոնը պետութեանից անջատ ճանաչելով:

Հայոց յեկեղեցու վրից ցարական Положения-ի շղթան ընկավ: Թվում եր թե հայ հոգևորականութիւնը ոլլանաններով պետք ե ընդունեւ կրոնի ազատութիւնը, վորի նմանը թերեւ միայն առաքելական դարումն ե յեղել:

Սակայն այդպես չեղավ. տգիտացած, փափկակեցութեան մեջ մեղկացած հոգևոր դասը, վոր միայն ցարական պոլոթինիայով եր իր գիրքերը պահում, աշտ անգոր, անաշտական զգաց իրեն: Հասել եր կրոնական

ազատ մրցման, կրոնական ինքնապաշտպանություն
 ժամանակը և հոգևորականությունը մտավորապես ան-
 դեն, բարոյապես անվարկ, հավատքով թույլ զգաց ի-
 րեն. փորձություն ժամին նրան չոգնեցին իր շքանշան-
 ներն ու հարստությունը: Նրա վրա արշավեցին նոր-
 նոր ազատ մտքերը և նա նրանց վոչ ընդունելու հա-
 ճություն ունեցավ և վոչ էլ գիմադրելու շնորհք:
 Կրոնական ազատություն այս նոր շրջանում ազատ ա-
 պարեզ չեկան հայ քրիստոնյա բողոքական, կաթոլիկ
 աղվեսաբան ճարտար քարոզիչները, վորոնց հունձը
 առատ յեղավ հայ լուսավորչական հավատացյալների
 մեջ. նրանց աղոթատները լցվեցին, հայոց յեկեղեցի-
 ները դատարկվեցին ամենուրեք: Ավետարանը մեր
 քրիստոնյա յեղբայրների՝ բողոքականների, աղվես-
 դիսանների, կաթոլիկների ձեռքին հատու զենք էր,
 իսկ մեր հոգևորների համար՝ մթին աշխարհ: Ճարա-
 կան որերում գիմակավորված հոգևորականների դեմ-
 քերն անձեռմխելի էյին, ազատ որերում ժողովրդի
 ձեռքը վար քաշեց գիմակները և նրանց տակը առա-
 քելական դեմքերի փոխարեն քարացած դեմքեր տեսավ,
 ուստի նրանից հեռացան շատերն ու անկրոն դարձան,
 նրանց բարքերը ծածկող վարագույնները պատառե-
 ցին և նրանց հետևում ժողովուրդը անպատշաճ գործեր
 տեսավ և ուժացավ, սառեց յեկեղեցուց: Քահանաներից
 շատերը տասնյակներով վերակուները հանեցին ու
 հեռացան, յեկեղեցիները շատ տեղերում առանց ժո-
 դովրդի, առանց քահանաների մնալով՝ իրենց իրենց
 գոցվեցին: Ժողովրդի տգետ զանգվածը կրոնապես ան-
 ճարակ մնալով—անտհավատությունները զրկեց: Մեր յե-
 տեից յեկող սերունդը, վոր դարգանում և նոր մտքով,

բնական որենքների հարուստ գիտությունը, վոր ա-
 սըն տարուց հետո յեկեղեցու ժողովուրդը պիտի լիներ,
 յեկեղեցի չի մտնի, Մայր Աթոսի 10 — 20 վանականնե-
 րից շատերը մահվան կանգիդատ են, նրանց յետեից յե-
 կող թարմ հոսանք չկա:

Միթե՞ պարզ չե, վոր Հայոց յեկեղեցին հոգևորքի
 մեջ է. միթե՞ պարզ չե, վոր հեռու չեն այն սրերը, վոր
 հայ քահանաները յերբեմնի տառական փառավոր յե-
 կեղեցու այժմյան քահանաների նման մի-մի խաչ ծո-
 ցերը դրած՝ պետք է դնեղուռ մուրացիկ դառնան մի
 կարճ ժամանակ և հետո... «հոգոցն հանգուցեցող»:

Այս անկումն, այս կործանումն յեղավ հայ ան-
 փույթ, տգետ, վատավարք հոգևորականության յերե-
 սից և Հայոց յեկեղեցու գլխին կախված է Հիսուսի
 արդար դատավճիռը. «Եջմիածին, Եջմիածին, վոր կո-
 տորեյիր դմարգարես և քարկոծ առնեյիր դառաքյալսն
 առ քեզ... արդ թողյալ լիցի առնդ քո ավերակ»:

Դ.

Ի՞նչ պետք էր անել յեկեղեցին կործանումից փր-
 կելու համար: Պետք էր յեկեղեցու ձեռքով հալածված
 60-ական թվականների բարեփոխական առաքյալների
 ձայնը բարձրացնել և ուժեղացնել, պետք էր հոգևոր
 դասի համար փտություն ու քարացումը ցույց տալ,
 պետք էր ժողովրդի անտարբեր միտքը շարժել, հետա-
 քըքել իր յեկեղեցիով և նրան հասկացնել, վոր ինքն
 իր ձեռքն առնի յեկեղեցին բարեկարգելու գործը Ավե-
 տարանի հիմունքով և նոր գաղափարների հարմարու-
 թյամբ:

99-96065

БИБЛИОТЕКА
 ИСТИНТА
 ДОСТОПОВЕДИИ
 Академии Наук
 СССР



Այս նպատակով հանդես յեկավ «Հայոց ազատ յեկեղեցական յեղբայրութիւնը»:

Նա «ազատ» կոչեց իրեն, վորպէս նախնական ազատ յեկեղեցու վորդեպիւր. ազատ ցարական որերի կաշկանդումներէց, ազատ ցարական յեպիսկոպոսների գավազանից. նա ցանկացավ քրիստոնեական ազատ հայ լուսավորչական յեկեղեցի լսորհրդային ազատ հայրենիքում:

Ինչպէս ստեղծվեց նա՝ շատ բնական ճանապարհով: Եղմիածնում կար մի Բենիկ վարդապետ, վոր 35 տարի խեղդված ձայնով իր մի շարք գրքերով, մամուլով («Հովիվ», «Հովիտ») խիստ, կծու լեզվով, ուժեղ թափով բողոքում եր հայ բարձր հոգևորականութեան դէմ և գուշակում: Թե՛ յեթե հոգևորականներս հոգով չբարեփոխվենք և բարեփոխութիւն չմտցնենք յեկեղեցու մեջ ժամանակի պահանջների համաձայն, յեկեղեցին կմեռնի: Այս բողոքի այս կանչի համար հոգևոր իշխանական դասը նրան չարաչար հալածել ե: Յերբ յեկան կրօնական ազատութեան մեծ, խորհրդավոր որերը, և յերբ հենց այդ որերում Եղմիածնական 4 — 5 յեպիսկոպոս ծերունի ազգընտիր հայրապետին ահաբեկելով յեկ գործադուլով սպառնալով իրենցից «գերագույն խորհուրդ» կազմեցին, կաթողիկոսի իրավունքները իրենց ձեռքն առան առանց ժողովրդի հովանութեան, յերբ կաթողիկոսական կոնդակների մեջ կաթողիկոսական կնիքի փոխարեն իրենց կնիքն ու իրենց ստորագրութիւնը դրին, այդ ժամանակ սպառնաց Բենիկ ծ. վարդապետի համբերութիւնը և նա իր նախորդ գրքերի շարքին ավելացրեց նորերը՝ «Թալանի վանքը» «Կուսակրօնութիւնը անառակութիւն ե», «Մնահալա-

ստեղծութիւնը քրիստոնեութիւն չե» «Եղմիածնի հոգևոր գերագույն խորհուրդ», «Կոչ հայ քահանայութեան», «Սրտագին խոսք» (Արտաստմանի հայ գաղութներին) «Իմ պատասխանը» (Եղմիածնի բարոյական ախտաժեանքներին) և յեկեղեցու բարեփոխութիւն պահանջեց ազգային յեկեղեցական ժողովով յեկ Հայոց ընտրյալ հայրապետի նախագահութեամբ:

Բենիկ ծ. վարդապետին նույն հոգի վրա աշակցեց Լենինականի առաջնորդ Աշոտ արքեպիսկոպոսը իր բողոքավոր գրքերով:

Այս գրքերը տասնյակ հազարներով տարածվեցին խորհրդային յերկրների սահմաններում ապրող և նրանցից ել դուրս յեղած հայութեան մեջ: Շարժումն առաջ յեկավ, բարեփոխական ձայներով արձագանք տվեց արտաստմանի խոհական մամուլը:

Ահա այդ ժամանակ հանդես յեկավ յեկեղեցու բարեփոխութեան և ժողովրդական ընտրական սկզբունքին իր ամբողջ կյանքն ու գրական աշխատութիւնները նվիրած հազվագյուտ ավագերեց և հասարակական գործիչ Մեսրոպ ավագ քահանա Մելյանը, վոր «Ազատ յեկեղեցի» շաբաթաթերթին ստեղծեց և կազմակերպեց «Հայաստանի ազատ յեկեղեցական յեղբայրութիւնը», վորի վարչութեան նախագահ ընտրվեց Հին-Բայազեդի թեմի բազմամյա առաջնորդ անվանի ավագերեց տեր Ներսես Քաջերեւոյն: Եղմիածնի ապրիլի «Գերագույն խորհուրդը» փոխանակ խելքի գալու, փոխանակ ընդառաջ գնալու բարեփոխական ձայներին խաղաղութեան ճամփին բռնելով, ցարական յերազ որերի ճամփին բռնեց, հայոց յեկեղեցու որենքներին հակառակ անդատ ու անդատաստան կարգալուծ չհայտարարեց Աշոտ Արք-

եպիսկոպոսին, Բենիկ վարդապետին և Մելյան ավագ քահանային, իսկ Քաջբերունի ավագ քահանային 4 ամսով դադարեցրեց քահանայադործությունից:

Վորտեղ, վժիռ աշխարհումն և տեսնված, թեկուզ մի վայրենի աշխարհում, վոր քրեական հանցագործությունների մեջ հրապարակով, տպագրական խոռոչով մեղադրված հանցագործները՝ ողտվելով իրենց դիրքից, առանց արդարանալու իրենց վզից կախված հանցանքներից, մեղադրողներին պատժեն:

Կույրեր, վոր անմիտ ու անհիմն հալածանքների պատմությունն են մոռացել. նրանք միշտ հակառակ արդյունք են տալիս: Յեվ ռմն են պատժում՝ Հայոց յեկեղեցու պաշտպանության համար ցարական բանտերում և քսոսներում տանջված Բենիկ վարդապետին ու Մելյանին, Սուլթան Համիդի բանդերում տանջված Քաջբերունին նրանց 60, 70, 75 տարեկան հասակներում:

Այս անիրավությամբ ամեն ուր «խաղաղություն ամենեցուն» կարգացող յեպիսկոպոսները, կրակի վրա նափա ածեցին և «Ազատ յեկեղեցական յեղբայրությունը» իր ճյուղերն տրձակեց Հայաստանի դավառներում՝ Լենինականում, Ալաբախում, Դարալուգյազում, հեռավոր արտասահմանում:

Թիֆլիսում յեղավ մեկը, մի հասարակական և գրական գործիչ՝ Հակոբ Տեր-Հարությունյան, վոր Հայոց յեկեղեցին կործանումից ազատելու բուն ցանկությամբ կազմակերպեց «Վրաստանի հայոց Ազատ յեկեղեցական յեղբայրությունը», նույն հիմունքների վրա գրեց իր «Մեր նպատակը» աշխատությունը:

Ի՞նչ և Հայաստանի, Վրաստանի և նրանց ճյուղերի «Ազատ յեկեղեցական յեղբայրության» ծրագիրը ու նպատակը ընդհանուր գծերով:

1. Պաշտպանել հայ ժողովրդի ընտրյալ ծերունի հայրապետի իրավունքները, վոր բռնությամբ խլել են 4—5 յեպիսկոպոս. ցրել ապրիներ, ժողովրդից ծածուկ, ինքնընտրի «գերագույն խորհուրդը», այդ գալթակղության քարը:

2. Պաշտպանել հայ լուսավորչական յեկեղեցու ընտրական վոգին և Խրիմյան Հայրիկի, Իզմբըլյան կաթողիկոսի և աթմյան Վեհափառի տված ընտրական կոնգալները, վորոնք վերադարձնում են հայ ժողովրդին նրանից խլված իրավունքները և հանձնարարում են ժողովրդին վոր իր հոգևորներին, առաջնորդներին, քարոզիչներին ինքն ընտրի:

3. Պնդապես պահանջել, վոր վոչ մի յեպիսկոպոս, վարդապետ, վորոնք տպագրական խոսքով մեղադրվում են քրեական և պղծական հանցագործությունների մեջ, մինչև դատով արդարանալը պաշտոնի չընտրել:

4. Մերժել տգետ, վատաբարո, անհավատ քահանաներին.

5. Ապահովել արժանավոր քահանաներին պատվավոր կանոնավոր ուժիկներով և վերացնել ազեղ սակարկությունը քահանաների և ժողովրդի մեջ, վոր շատ անախորժությունների և յեկեղեցու վարկաբեկման հիմք և դառնում:

Ռոճիկները սահմանելուց հետո, բոլոր ծիսակատարությունները կատարել տալ ձրի. քահանայի և ժողովրդի մեջ փողի հաշիվ չպետք և լինի:

6. Վանականներից, քահանաներից և աշխարհականներից ընտրել ընտրհալի քարոզիչներ և յեկեղեցիները դարձնել քրիստոնեյական դաստիարակության դպրոցներ:

7. Յեկեղեցու մեջ շատ բան հնացել է, վոր փոփոխության և բարեփոխության է կարոտ. այդ բարեփոխություններն անել հարմարացնելով յեկեղեցին ժամանակի առողջ մտքերին և պայմաններին, անխախտ պահելով Ավետարանի տված սկզբունքները յեվ հայ լուսավորչական յեկեղեցու ինքնուրույն կերպարանը: Այդ բարեփոխություններից մի շարք արդեն արել է Վեհափառ կաթողիկոսը Նշմիածնի յեպիսկոպոսների խորհրդով. որինակ՝ ամուսնական աստիճանների կըրճատելը, քավորի և սանիկի իրար հետ ամուսնանալու թույլտվությունը *), տոմարի խնդիրը, քահանաների կրկնամուսնությունը և այլն: Սակայն բարեփոխության կողմնակից լինելով հանդերձ, մենք բողոքում ենք, վոր Նշմիածնի մի քանի յեպիսկոպոսներ այդ փոփոխություններն անում են առանց ժողովրդի գիտության և շփոթությունների տեղիք են տալիս, ինչպես որինակ նոր տոմարի խնդիրը: Հայոց ժողովուրդն է յեկեղեցու վերին տերը. բարեփոխությունը պետք է կատարվի ազգային-յեկեղեցական ժողովով, ինչպես յեղել է միշտ, ինչ վոր մենք այժմ պահանջում ենք:

8. Պահանջել, վոր յեկեղեցու բարձրագույն վարչությունը կազմվի աշխարհական և հոգևորական ընտրյալներից, վորոնք ընտրվին ազգի ընտրյալ պատգամավորների կողմից:

*) Թիֆլիսի շրջանի Ծալկայի 13 գյուղի հայությունը իրենց զործակալի միջոցով բուն բողոք են ներկայացրել Վրաստանի թեմական խորհրդին քավոր-սանիկի ամուսնության թույլտվության մասին:

9. Պահանջել, վոր վոչ մի հոգևորական առանց ժողովրդի հաճության, առանց արդար դատի ու դատաստանի չպատժվի կամ վարձատրվի միայն հոգևոր պետերի կողմից:

10. Պահանջել մայր աթոռից վոր իր ամբողջ գույքի, դարերով կուտակված ազգային հարստության լիակատար ինվենտարը կազմի փաստացի կերպով և հրատարակի ի գիտություն ազգի, վորպես գի գոնե այսուհետև մեր Մայր աթոռը չթալանվի անպատասխանատու, անարժան յեպիսկոպոսների և վարդապետների ձեռքով:

11. Պահանջել Նշմիածնից և բոլոր յեկեղեցիներից, վոր ամեն տարի յել և մուտքի և դործունեյության հաշիվ տան ժողովրդին տպագրված տեղեկագրերով:

12. Պահանջել վոր հայ հոգևորականությունը միայն իր կողման դործով զբաղվի և քաղաքականությամբ չզբաղվի. նրա վարած քաղաքականությունը կորստաբեր է յեղել միշտ, մանավանդ վերջին շրջանում, հայ ժողովրդի համար: Պահանջել վոր ասպարեզից վտարվին արտասահմանյան այն յեպիսկոպոսները, վորոնք այս կամ այն կուտակցության կամ այս կամ այն պետության ձեռքին խաղալիք դառնալով, վերածնվող խորհրդային Հայաստանի դեմ են դործում դավաճանաբար: Նրանց արարքի պատասխանատվությունը հայ ժողովրդի առաջ ընկնում է Նշմիածնի «գեր-խորհրդի» վրա, վոր վերին հսկողն է բոլորի:

Ահա այս է համառոտ կերպով այն ծրագիրը և նպատակը, վոր դրել է «Ազատ յեկեղեցական յեղբայրությունը» իր առաջ և ամեն մի սրտացավ հավատացյալ, յեթե սիրում է իր յեկեղեցին և նրա կործանու-

մը չի ցանկանում, պետք է միանա մեզ և «Ազատ յեկ. յեղբայրության» մեջը մտնի:

Այլապես, ինչպես փաստացի պատկերացրինք, մեր յեկեղեցին կործանվող յեկեղեցի յի հայ հոգևորականութեան յերեսից:

Դառնանք հետեյալ հարցին, թե՛ ինչ վերաբերմունք է ցույց տալիս Նշմիածնի ապոլինի Գերխորհուրդը «Ազատ յեկեղեցական յեղբայրության» շարժմանը:

Ժողովրդական առածն ասում է. «Աստված վատ մարդկանց փորձանքի մեջ զցելու համար, առաջուց խելքն է առնում»: Յարական յեկեղեցու վոգով թաթախված գերխորհրդականները հին սրբերում յերազելով իրենց կամ այդ ուրերը վերադարձնելու քաղցր յերազներով, իրենց գլուխը կորցրին և փոխանակ խոհական ճանապարհ բռնելու, փոխանակ խաղաղությամբ իրավախոր լինելու, «Ազատ յեկ. յեղբայրության» հետ և ընդառաջ գնալու այն ամենին, ինչ վոր ճշմարիտ էր, իշխանական դավազանը վերցրին «ազատ յեղբայրության» հոգևոր անդամների դեմ. նրանց սկսեցին կարգալուծ անել, մերժեցին նրանց առաջարկութունը միասին խորհրդակցել կործանվող յեկեղեցու խընդիրների մասին: Սկսեցին պայքար նրանց դեմ հետեյալ զազիր միջոցներով: Զրպարտիչ լեզուներով և բանասարկու շրջաբերականներով տարածեցին թե «Ազատ յեկ. յեղբայրության» անդամները կաշառված են, վոր կործանեն հայոց յեկեղեցին, (իսկ 1906—11 թվականներին ռվ եր կաշառել Բենիկ վարդապետին, յերը գլորքերով բզկատում էր հոգևոր ջոջերին), նրանք հայոց յեկեղեցի չեն ճանաչում (մինչդեռ «Ազատ յեկ. յեղբայրության կանոնադրության ա. հոգվածն ասում է, վոր

ճանաչում են ազգընտիր հայրապետին իբրև գլուխ հայ լուս. յեկեղեցու) փթերով խաչեր, կամիրավկաներ, ավագութուն և այլ պարգևներ ու փող բաժանեցին տղետ քահանաներին և նրանց լեզուները զբալարտություններով զինելով, բաց թողին «Ազատ յեկ. յեղբայրության» վրա. իրենց առաջնորդներին հրամայեցին կաթոլիկական միջնադարյան ինկվիզիցիան մտցնել հայոց յեկեղեցու մեջ և ահաբեկման շրջաբերականներ գրել թեմերի քահանաներին թե՛ ով վոր Ազատ յեկեղեցական յեղբայրության մեջ մտնի, կարգալուծ կլինի (Թիֆլիսի առաջնորդի «Հնաշխարհիկ» շրջաբերականը) և այլն և այլն:

Ահա պայքարի այն միջոցները, վորոնցով խելակորույ սգրխորհրդական յեպիսկոպոսները կրակի վրա նավթ լցրին և հրդեհ վառեցին, առանց հասկանալու թե այդ հրդեհի մեջ իրենք են վառվելու:

Գ. Խ. իրենց անխելքության մեջ առաջ գնալով՝ իրենց վոտքը դավաճանական հողի վրա զրին: Նրանք հրահանգեցին արտասահմանի մի խումբ փառամոլ և շահամոլ յեպիսկոպոսների, վոր զաղթավայրերում լեզու ածեն խորհրդային Հայաստանի իշխանության դեմ. Մելիք-Թանգյան, Բալաքյան յեպիսկոպոսները միամիտ գաղթավայրերի սրտերը պղտորեցին և հանդիսացան վորպես վերածնվող Հայաստանի դեմ դավաճաններ: Մակայն արտասահմանի հայերը գլխի ընկան և դավաճան յեպիսկոպոսներին ուժեղ հակահարված տվին. ուրինակ՝ Մարսելի յեկեղեցում Բալաքյանի մանկավիճիկ ինչոր մի Կարապետ վարդապետի չար լեզուն տեղն ու տեղը լռեցրին, յերը նա խոսում էր խորհրդային հայրենիքի դեմ: Հայրենասեր հոգևորականները ծառացան

դավաճանների դեմ. ինչպես Աթենքի Կարապետ արքեպիսկոպոսը, վորին լռեցնելու համար «սուրբ» գերազուեականները «հայ քաջերով» վրա տվին նրան յեկեղեցու մեջ և մորուքը խուզեցին, նախատինքի նյութ դարձնելով հայ յեկեղեցին Հունաստանում և ամեն տեղ:

Ավելի խայտառակը լսեցեք: Նախապես ասենք, վոր անգլիական յեկեղեցին, անգլիական քաղաքականությունը արեւելքում տարածելու համար, աշխատում և անգլիական վոսկու գնով արեւելյան յեկեղեցիների հոգեւորականներին իր ձեռքը քցել: Մի քանի հայ յեպիսկոպոսներ անգլիական և ամերիկական արտաքին գործոց մինիստրների հատուկ ցանկությամբ դիմեցին անգլիոյ Կենտրոնների արքեպիսկոպոսին, վոր անգլիական փողով Յերուսաղեմի Հայոց վանքում հոգեւոր դպրոց բանա, անգլիական վարդապետ ուսուցիչների ձեռքով Հայոց յեկեղեցու համար հոգեւորականներ պատրաստելու:*) Կաշառված յեպիսկոպոսների նպատակն իրագործված և. Անգլիացի Պրիճմեն վարդապետը գնացել և Յերուսաղեմ, վորպես «Հայոց հոգեւոր դպրոցի» տեսուչ և Պաղեստինի անգլիական յեպիսկոպոսի զեկավարությամբ պետք և դպրոց բանան.

Ի՞նչ և կարծում հայոց յեկեղեցուն հավատարիմ ժողովուրդը. կարող և անգլիական հոգեւորների ձեռքով պատրաստված հայ վարդապետը հայ լուսավորչական յեկեղեցուն հավատարիմ հովիվ լինել: Չէ՞ վոր պատմական փաստեր ունենք անցյալում. կաթոլիկ յեկեղեցին հայ պատանիների համար հոգեւոր դպրոցներ բանալով և նրանցից վարդապետներ ձեռնադրելով, կա-

թոլիկություն տարածեց հայ ժողովրդի մեջ թե արտասահմանում և թե նույնիսկ Հայաստանում, եջմիածնի քթի տակին. նույնը արին և ամերիկական միսիոներական ընկերությունները հայ բողոքական քարոզիչների ձեռքով բողոքականացնելով հայ ժողովրդին արտասահմանում և հայաստանում: Այժմ դավաճան հայ յեպիսկոպոսները անգլիական յեկեղեցին են ուզում տարածել մեր մեջ անգլիական հոգեւորների ձեռքով պատրաստված հայ հոգեւորներով: Ահա Հայոց յեկեղեցու ջլատումը, ահա կործանումը հայոց յեկեղեցու, վորի պատասխանատուությունը ծանրանում և եջմիածնի անխոհեմ, անմիտ, կրքով կուրացած ապուրինի «գերխորհրդի» վրա:

Սակայն հայ ժողովրդի աչքը միշտ փակ չի մնա. շուտով «Ազատ յեկ. յեղբայրության» ձյուղերն արտասահմանում հակահարված կտան դավաճան յեպիսկոպոսների մտմտութիւններին: Մենք թույլ չենք տա վոր մի խումբ դավաճան «տեր Կիրակոսներ», «Պետրոս Գետադարձներ» (կարգա Անիի դավաճանությունը) «Յեզրներ» և «Ոհանիկներ» հայոց յեկեղեցին վաճառեն: Մեր վերջին խոսքը Թիֆլիսի Քամոյան յեկեղեցու տխուր և անմիտ դեպքի մասին:

Հայ վերին հոգեւորականության յերեսից Կործանվող յեկեղեցին փրկելու միջոցներից մեկն ևլ «Ազատ յեկեղեցական յեղբայրությունը» համարում և հայ քարոզչության վերականգնումը: Այդ նպատակով նա Թիֆլիսի 15 յեկեղեցիների ծխական ժողովների ընտրությամբ հրավիրեց Բենիկ ծ. վարդապետին քարոզիչ: Ընտրական արձանագրության իսկականը ընտրողների իսկական ստորագրություններով ուղարկվեց Վեհափառ կաթոլիկոսին, վորտեղ ասված և թե ժողովուրդը աղեր-

*) Տես, Ամենուն տարեցույց 1925 թ. և «Ազատ յեկ.»

սում ե հայրապետին վերահաստատել Բենիկ ծ. վարդապետին իր կոչման մեջ և որհնել իրենց ընտրությունը: Սակայն կրքով կուրացած յեպիսկոպոսները վոչ միայն թույլ չեն տվել ծերունի հայրապետին ընդառաջ գալու ժողովրդի ընտրական ձայնին համաձայն հենց իր ընտրական կոնդակի (1917 թ.), այլ մինչև իսկ հրահանգել են Թիֆլիսի առաջնորդին պատասխանատվության կանչել այն քահանաներին, վորոնք համարձակվել են Բենիկ ծ. վարդապետին ընտրել իրենց ստորագրություններով և վավերացրել ընտրական դիրք: Հոգևոր ինկվիզիցյայից սարսափահար մի յերկու ստրուկ քահանա ներողություն են խնդրել իրենց այդ «հանցանքի» համար:

Սրանով չբավականանալով՝ գերխորհրդական ս. «հոգու փշմամբ» Թիֆլիսի առաջնորդին շրջապատած քահանաները սրիկայական մի ակտ կատարել տվին Գամոյան յեկեղեցում նոյեմբերի 7-ին «Ազատ յեկ. յեղբայրության» և Բենիկ ծ. վարդապետի դեմ: Յերբ քարոզիչն այդ որ հետ դարձավ դեպի ժողովուրդը քարոզ խոսելու, մի խումբ խռովարարներ հայ քահանայի և նրա կնոջ գլխավորությամբ աղմուկով լցրին տաճարը, խանգարեցին պատարագը, չթողին քարոզիչին խոսելու:

Անկարգությունների առաջն առնվեց, միլիցիան աղմուկին վրա հասավ, մի յերկուսին ձերբակալեց, յեկեղեցու վարչությունից պահանջեց խռովարարների ցուցակը և նրանց դատի հանձնեց: Խռովարարների չքանալուց հետո, վրդովված ժողովուրդը հետ դարձավ յեկեղեցի և պնդապես խնդրեց, վոր Բենիկ ծ. վարդապետը խոսի իրենց. նա քարոզեց յերկու անգամ տարբեր խմբերի և խաղաղությամբ արձակեց ժողովրդին:

Խռովարար քահանաներից յերկուսը արձակվեցան յեկեղեցու ծառայությունից, յեկեղեցու խորհրդի կողմից: Բենիկ ծ. վարդապետը շարունակում է իր քարոզները խաղաղ մթնոլորտում և հետզհետե լցնում յեկեղեցին ժողովրդով, միակ յեկեղեցին Թիֆլիսում, վոր ժողովրդի յերես ե տեսնում:

Խռովարարների ներկը դուրս տվեց և մի այլ կերպ. նրանք վոր տարածում եյին թե պետությունը աջակցում է «ազատ յեկ. յեղբայրության», դեպքի մասին ստահող հոգվածներ տվին խորհրդային ուսուերին և հայերեն մամուլին ի փաս «Ազատ յեկ. յեղբայրության» և մամուլը տպեց այդ հոգվածները իր հավանավորությունը ցույց տալով խռովարարներին:

Ի հարկե ստությունները հերքվեցին և կհերքվին, կփնա միայն մի բիծ հայ հոգևորների և նրանց շնչով կուրացած մի խումբ խռովարարների վրա. վոր նրանք Հիսուսի տաճարը անկարգությամբ լցրին և արատավորեցին հենց իրենց կեղծ հավատավորությունը:

Նրանք յեթե բարեխիղճ հավատացյալներ լինեյին և հայ լուսավորչական յեկեղեցին սիրողներ, վոչ թե պետք է պահանջեյին Բենիկ ծ. վարդապետին հռոմեցի յեկեղեցուց, այլ այն քրեյական հանցադործ հոգևորներին, վորոնց մեղքերը հրապարակի վրա յե, վորոնք գերության մեջ են առել ազգընտիր ծերունի հայրապետին:

Գամոյան յեկեղեցու դեպքի ճիշտ պատմությունը և գնահատությունը մենք կտանք դատից հետո. մենք հոգևորներից վոմանց դիմակները կպատուենք և նրանց դեմքը ցույց կտանք հայ ժողովրդին:

Այս նկարագրից հետո, հայ ժողովուրդը պետք է հասկանա, վոր հայոց յեկեղեցին ջլատվում, կործանվում է մի 4—5 գերխորհրդական յեպիսկոպոսների կույր կամայականությամբ և Ազատ յեկեղեցական յեղբայրութիւնն է, վոր ուզում է հայ ուղղամիտ հաւատացյալների սիջոցով փրկել յեկեղեցին հոգևորների կործանումից:

Ով ականջ ունի թող լսի, ով խիղճ ունի թող դպա:



ՀՀ Ազգային գրադարան



NL0180182

2188

Վրաստանի «Ազատ Յեկ. Յ»
սարակություն

ա

- | | |
|-------------------------|-------|
| № 1. «Մեր ՆՊԱՏԱԿԸ» . . | 20 Կ. |
| № 2. «ԿՈՐԾԱՆՎՈՂ ՅԵԿԵՂԵՑ | 15 » |

807

15. 10



Հասցե՝ Тифлис, ул. Желябсва (б. Соломоновская) № 4,
«Ազատ Յեկ. Յեկր.» գրասենյակ: